ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՌԱՆՑ ՀԱՐՑԱԿԱՆ ԲԱՌԻ ՀԱՐՑՄԱՆ ՀՆՉԵՐԱՆԳԸ

Ս. Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ժամանակակից գրական հայերենի առանց հարցական բառի հարցման տակ առանձնացնում ենք հետևյալ ենթատեսակները. այո-ոչ, ընտրանքային, լրացուցիչ և կցորդային հարցումներ։

Այս հարցատեսակների հնչերանգը ուսումնասիրելու համար ընտրվել են համապատասխան կոնտեքստներ (63 նախադասություն)։ Ձայնագրվել են վեց տղամարդ-հաղորդավարներ։ Գրանցված կոնտեքստներից առանձնացվել են համապատասխան հնչադասությունները[1] և ենթարկվել լսողական վերլուծության։ Ողջ հնչադասությունը բաժանում ենք երեք հատվածի. միջուկ (վանկ)՝ հնչադասության գլխավոր շեշտը կրող մասը, նախամիջուկ՝ հնչադասության միջուկին նախորդող մասը և ետմիջուկ՝ միջուկին հաջորդող մասը։

Այնուհետև VI—67 ինտոնոգրաֆի օգնությամբ ստացվել են համապատասխան հնչադասությունների ինտոնոգրամները։ Ինտոնոգրամը ձայնի ֆիզիկական պարամետրերի ամբողջական գրանցումն է լուսանկարչական թղթի վրա[2] (նկ. 1)։

Ինտոնոգրամը տալիս է ձայնի հետևյալ սկզբնական հատկությունները. հիմնական տոնի հաճախականությունը (ՀՏՀ), ինտենսիվությունը և տևողությունը։ Սկզբնական այս հատկությունների հիման վրա մենք ուսումնասիրել ենք հնչերանգի հետևյալ երկրորդական ձայնաբանական հատկությունները.

1. Հնչադասության ՀՏՀ-ի շարժման ուղղությունը։

2. Հնչադասության առավելագույն և նվազագույն հաճախականությունների տեղայնացումը։

3. Հնչադասության հաճախականության դիապազոնը (կիսատոներով՝ կտ) (որոշվում է հնչադասության ամենամեծ և ամենափոքր հաճախականությունների հարաբերությամբ)։

4. Միջուկի հաճախականության աճման դիապազոնը (կտ) (որոշվում է միջուկի սկզբի և վերջի հաճախականությունների հարաբերությամբ)։

---

1 Հնչադասություն տերմինը համապատասխանում է ֆրազին (Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 90)։

2 Ինտոնոգրամի կենտրոնով տատանումներով անցնող գիծը խոսքային ազդանշանի օսցիլոգրամն է։ Օսցիլոգրամի վրայով տարածվող գծիկները ինտենսիվության ցուցիչներն են, որոնք ցույց են տալիս խոսքային ազդանշանի հնչյունական ճնշման միջին աստիճանը։ Օսցիլոգրամի ներքևով անցնող կորը ցույց է տալիս ձայնալարերի տատանման հիմնական տոնի հաճախականության (ՀՏՀ) փոփոխությունը։ Ուղղահայաց գծերը տևողության ցուցիչներն են, ընդ որում երկու գծերի միջև ընկած տարածությունը 20 մվրկ է։

5. Ստմիջուկային վանկի հաճախականության նվազման դիապազոնը (կտ) (որոշվում է նույն ձևով)։

6. Միջուկի ՀՏՀ-ի աճման արագությունը (որոշվում է միջուկի սկզբի և վերջի հաճախականությունների տարբերության ու այդ հատվածի տևողության հարաբերությամբ)։

7. Ստմիջուկային վանկի ՀՏՀ-ի նվազման արագությունը (որոշվում է նույն ձևով)։

8. Երկու հնչաշարույթների[3] միացման հաճախականության միջակայքը (ինտերվալը) (որոշվում է առաջին հնչաշարույթի վերջին և երկրորդ հնչաշարույթի սկզբի հաճախականությունների հարաբերությամբ)[4]։

9. Հնչադասության առավելագույն ինտենսիվությունը։

10. Հնչադասության ինտենսիվության դիապազոնը (որոշվում է ամենամեծ և ամենափոքր ինտենսիվությունների տարբերությամբ)։

11. Հնչադասության վերջին վանկի ինտենսիվությունը, որը մենք վերցրել ենք բացասական (—) արժեքով, այսինքն՝ առավելագույնից հանել ենք վերջին վանկի ինտենսիվությունը և վերցրել բացասական արժեքով։

12. Հնչադասության վանկի միջին տևողությունը (որոշվում է հնչադասության ողջ տևողության և վանկերի քանակի հարաբերությամբ. վերցրել ենք միայն ձայնավորների տևողությունը)։

13. Միջուկային վանկի տևողության (ՄՎՏ) հարաբերությունը վանկի միջին տևողությանը (ՎՄՏ)։

Հոդվածում բերված թվային տվյալները համապատասխան ձայնաբանական հատկությունների միջին թվաբանականներն են։ Յուրաքանչյուր հարցատեսակի ՀՏՀ-ի շարժումը տալու համար ընտրվել է մեկ տիպական հնչադասություն, որի համար հանվել է մեկ տիպական կոր (ընդ որում հաշվի է առնվել վեց հաղորդավարների արտասանությունը)։

1. Այո-ոչ հարցման հնչերանգ—Այո-ոչ հարցման արտահայտման հիմնական միջոցը հարցական հնչերանգն է։ Այս հարցմանը պատասխանվում է այո և ոչ բառերի միջոցով։ Այո-ոչ հարցման տակ առանձնացվում է երկու ենթատեսակ. ա) չեզոք, երբ խոսողը չի ենթադրում իր հարցման պատասխանը, այսինքն՝ հարցում, որի պատասխանը հավասարապես կլինի և՛ այո, և՛ ոչ. բ) ենթադրական, երբ խոսողը ինչ-որ չափով ենթադրում է իր հարցման պատասխանը։ Ենթադրականը չեզոքից տարբերվում է միայն շարադասությամբ, այսինքն՝ ունի լրացում+օժանդակ բայ+բուն բայական մաս։

ա) Չեզոք հարցման տակ, ըստ հարցաշեշտի[5] գրված դիրքի, առանձնացնում ենք հնչերանգային երեք կառույց. չեզոք—1 (չ—1), երբ հարցաշեշտը ընկնում է հնչադասության վերջին վանկի վրա (Դպրոց գնացի՞ր), չեզոք—2 (չ—2), երբ հարցաշեշտը ընկնում է նախավերջին վանկի վրա (Դպրոց գնո՞ւմ ես), չեզոք—3 (չ—3), երբ հարցաշեշտը ընկնում է կենտրոնում (Գնո՞ւմ ես դպրոց)։

---

[3] Հնչաշարույթը շարույթի համապատասխան միավորն է հնչյունական մակարդակում։

[4] Երբ երկու հնչաշարույթների միացման հաճախականության միջակայքի թվային արժեքի առջև դրված է + նշանը, նշանակում է հաճախականությունը այդ կետում ցատկ է կատարում դեպի վեր, իսկ երբ դրված է — նշանը՝ դեպի ներքև։

[5] Հարցաշեշտի տակ հասկանում ենք հարցական հնչադասության գլխավոր շեշտը։



Նկ. 1.

Չեղոք հարցման այս երեք տարատեսակներն ունեն հաղորդակցական մեկ արժեք, այսինքն՝ դրանք հաղորդակցական տարբեր դործառություն չեն կատարում։

Չ—1-ի ՀՏՀ-ի շարժման ուղղությունը բարձրացող է, իսկ չ—2-ինը և չ—3-ինը՝ բարձրացող-իջնող։ Չ—1 և չ—3 տեսակների դեպքում նախամիջուկում տոնը ենթարկվում է բազմատեսակ փոփոխության. ավելի հաճախ հանդիպում են հետևյալ դեպքերը. բարձրացող-իջնող, բարձրացող-ուղիղ, բարձրացող-ուղիղ-բարձրացող։ Նախամիջուկային տոնի այս տարբեր փոփոխությունները իմաստային և զգացական նրբերանգներ չունեն։ Միջուկում տոնի շարժումը միայն բարձրացող է, իսկ ետմիջուկում՝ իջնող (չ—1-ը ետմիջուկ չունի)։ Չ—1-ի տոնի շարժումը (կտ) ցույց տալու համար որպես օրինակ վերցվել է «Լավ կնայե՞ս» հնչադասության ընդհանուր կորը (գծ. 1)[6]։

Չ—2 և չ—3 տոնների շարժումը ներկայացված է «Ծիրան բերե՞լ ես» և «Բերե՞լ ես ծիրան» հնչադատությունների ընդհանուր կորերով (գծ. 2 և 3)։

Երբ չեզոք հարցման երեք տեսակների ձայնաբանական հատկությունները զուգադրում ենք միմյանց, տեսնում ենք, որ նրանցից յուրաքանչյուրն ունի հիմնական ձայնաբանական հատկություններ, որոնք տարբերակում են մեկ տեսակի հնչերանգը մյուսից։ Նախ զուգադրում ենք չ—1-ը չ—2-ի, իսկ հետո՝ չ—2-ը չ—3-ի հետ։

Այսպես՝ ՀՏՀ-ի շարժման ուղղությունը չ—1-ի և չ—2-ի մոտ տարբեր է. ինչպես տեսանք, չ—1-ինը բարձրացող է, իսկ չ—3-ինը՝ բարձրացող-իջնող. չ—1-ի առավելագույն հաճախականությունը տեղայնանում է վերջին, իսկ նվազագույնը՝ առաջին վանկում, չ—2-ի առավելագույնը՝ նախավերջին, իսկ նվազագույնը՝ վերջին վանկում. չ—1-ի հաճախականության դիապազոնը

---

[6] Ուղղահայաց առանցքի վրա տրված են կիսատոները, իսկ հորիզոնականի վրա նշված են վանկերը։ Վանկերը վերցված են հավասար մեծությամբ, որպեսզի տոնի փոփոխությունը ակնառու երևա։ Բացի ձայնորդներից, մնացած բաղաձայնակիր հատվածներում տոնի շարժումը տրված է ընդհատվող գծերով։

(8,16 կտ) փոքր է չ—2-ինից (12,33 կտ). չ—1-ի միջուկի հաճախականության արագությունը (0,46 հց/մվրկ) դարձյալ փոքր է չ—2-ինից (1,25 հց/մվրկ). չ—1-ի վերջին վանկի ինտենսիվությունը (—2,83 դբ) մեծ է չ—2-ինից



գծ. 1

(—6,04 դբ). չ—1-ի ՄՎՏ հարաբերությունը ՎՄՏ (1,66) դարձյալ մեծ է չ—2-ինից (1,09)։

Չ—2-ի և չ—3-ի հատկությունների զուգադրությունը ցույց է տալիս, որ երկուսի մոտ էլ ՀՏՀ-ի շարժման ուղղությունը բարձրացող-իջնող է՝ միայն



գծ. 2.

չ—2-ի հաճախականության բարձրացումը կատարվում է նախավերջին վանկում, իսկ չ—3-ինը՝ կենտրոնում. չ—2-ի առավելագույն հաճախականությունը տեղայնանում է նախավերջին վանկում, իսկ չ—3-ինը՝ կենտրոնում. չ—2-ի հաճախականության դիապազոնը (13,33 կտ) փոքր է չ—3-ինից (16,5 կտ). չ—2-ի ետմիջուկային վանկի հաճախականության նվազման դիապազոնը (11,92 կտ) մեծ է չ—3-ինից (6,5 կտ). չ—2-ի ետմիջուկային վանկի



գծ. 3



գծ. 4

հաճախականության նվազման արագությունը (1,25 հց/մվրկ) մեծ է չ—3-ինից (0,99 հց/մվրկ). չ—2-ի ինտենսիվության դիապազոնը (6,79 դբ) փոքր է չ—3-ինից (14,66 դբ). չ—2-ի վերջին վանկի ինտենսիվությունը (—6,04 դբ) մեծ է չ—3-ինից (—14 դբ)։

Զ—1, չ—2 և չ—3 հարցատեսակների համար նշված ձայնաբանական հատկությունները հիմնական են, որովհետև սրանցով նրանց հնչերանգները տարբերվում են միմյանցից։ Ոչ հիմնական հատկություններից են հատկապես միջուկի հաճախականության աճման դիապազոնը (6—7 կտ) և առավելագույն ինտենսիվությունը։ Վերջինս բոլոր հարցատեսակների մոտ համարյա միևնույն մեծության է (38—39 դբ)։

Զեզոք հարցման հնչերանգային երեք կառույց ունենալու հանգամանքը բացատրվում է նրա շարահյուսական առանձնահատկություններով. հատկապես ստորոգյալի դիրքով և կազմությամբ։ Զ—1-ի ստորոգյալը հիմնականում համադրական է և գտնվում է վերջում, չ—2-ինը՝ վերլուծական. ստորոգյալը դարձյալ՝ վերջում, իսկ չ—3-ի ստորոգյալը գտնվում է սկզբում (նշանակություն չունի այն համադրական է, թե վերլուծական)։

Զեզոք հարցման ձայնաբանական տվյալները հաստատվում են լսողական վերլուծությամբ (ունկնդիրներն առանց դժվարության տվյալ հնչադասությունը վերագրում են այս կամ այն տեսակին, որի հիմքում ընկած են վերը առանձնացված հիմնական ձայնաբանական հատկությունները)։

բ) Ենթադրական հարցման հնչերանգը նման է չ—3-ի հնչերանգին, ուստի նրա ձայնաբանական հատկությունները չենք կրկնում։ Նշենք միայն մի քանի առանձնահատկություններ։ Ենթադրական հարցման դեպքում խոսողի

սուբյեկտիվ վերաբերմունքը հիմնականում արտահայտվում է հարցման շարադասությամբ, իսկ հնչերանգով արտահայտվում է հարցական իմաստը։ Խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքի տակ հասկանում ենք նրա կողմից իր տված հարցի պատասխանի ենթադրումը։ Երբ խոսողը ավելի մեծ հավանականությամբ է ենթադրում իր հարցման պատասխանը, ապա նրա հնչերանգի մեջ տեղի են ունենում որոշ փոփոխություններ, որն առաջին հերթին դրսևորվում է հարցման սկզբում ՀՏՀ-ի մակարդակի բարձրացմամբ։ Ինչպես ցույց է տալիս փորձառական ուսումնասիրությունը, ենթադրական հարցման դեպքում հարցաշեշտը դրվում է ինչպես օժանդակ բային նախորդող վանկի (Նամա՞կ ես գրում), այնպես էլ օժանդակ բայի վրա (Նամակ ե՞ս գրում)։ Վերջինս բնորոշ է ժողովրդա-խոսակցական լեզվին և սկսել է լայն տարածում գտնել նաև գրական լեզվի մեջ։

«Արա՞ն է պատմել» ենթադրական այո-ոչ հարցման հնչերանգը զուգադրել ենք շարահյուսական նույն կառուցվածքն ունեցող «Արան է պատմել» հաստատման հնչերանգի հետ։ Այս զուգադրությունը ցույց է տալիս, որ ձայնաբանական որոշ հատկություններ կատարում են իմաստատարբերակիչ դեր, այսինքն՝ հաղորդակցական մեկ տիպի (հաստատման) հնչերանգը տարբերակում են մյուսից (հարցականից)։ Այդ հատկությունները հետևյալներն են. ՀՏՀ-ի շարժման ուղղությունը երկու դեպքում էլ բարձրացող-իջնող է[7]. միայն հարցման դեպքում բարձրացումը և իջեցումը շատ ավելի մեծ են, հաստատման նվազագույն հաճախականությունը տեղայնանում է եզրաշեշտին հաջորդող վանկում, իսկ հարցմանը՝ վերջին վանկում։ Հաստատման հաճախականության դիապազոնը (9 կտ) փոքր է հարցումինից (15,16 կտ), հաստատման միջուկի հաճախականության աճման դիապազոնը (1,33 կտ) փոքր է հարցումինից (7,66 կա), հաստատման միջուկի հաճախականության աճման արագությունը (0,28 հց/մվրկ) նույնպես փոքր է հարցումինից (0,83 հց/մվրկ)։

Հաստատման և հարցման հնչերանգների տարբերությունը հիմնականում կապված է միջուկային տոնային տարրեր կառուցվածքների հետ (գծ. 4)։ Հաստատման դեպքում միջուկի տոնը բարձրացող-իջնող է (2 կտ), իսկ հարցման դեպքում միայն բարձրացող (6—8 կտ)։

2. Ընտրանքային հարցման հնչերանգ—Ընտրանքային հարցումն ունի արտահայտման երկու հիմնական միջոց. հարցական հակադրություն, որն իրագործվում է հակադրական թե շաղկապի միջոցով, և հարցական հնչերանգ։ Ընտրանքային հարցման տակ առանձնացվում է երկու ենթատեսակ. ա) բազմեղր ընտրանքային հարցում (Տո՞ւն ես գնում, թե դպրոց։ Գնում ես տո՞ւն, դպրո՞ց, թե թատրոն և այլն), բ) երկեղր ընտրանքային հարցում (Մնա՞մ, թե գնամ։ Գալի՞ս ես, թե ոչ)։ Ընտրանքային հարցումը բաղկացած է լինում ամենաքիչը երկու շարույթից։

ա) Բազմեղր ընտրանքային հարցման տակ, ըստ հարցաշեշտի գրված դիրքի, նույնպես առանձնացվում է հնչերանգային երեք կառույց. բազմեղր—1 (բ—1), երբ հարցաշեշտը ընկնում է հարցման առաջին եզրի վերջին վանկի վրա (Գյուղո՞ւմ ես ապրում, թե քաղաքում), բազմեղր—2 (բ—2), երբ հարցաշեշտը ընկնում է առաջին հնչաշարույթի ստորոգյալի վերջին վանկի վրա (Գյուղում ես ապրո՞ւմ, թե քաղաքում), բազմեղր—3 (բ—3), երբ

7 Հաստատման տոնը կարող է շարժվել նաև ուղիղ։

հարցաշեշտը ընկնում է առաջին եզրի վերջին վանկի վրա. սակայն տոնը ոչ թե անմիջապես նվազում է, ինչպես բ—1-ի դեպքում, այլ ուղիղ շարժվում է և միայն երկրորդ հնչաշարույթի ներսում սկսում նվազել (Գյուղո՞ւմ ես ապրում, թե քաղաքում)։

Ի տարբերություն չեկոք այո-ոչ հարցման, բազմեղր ընտրանքային հարցման դեպքում միևնույն նախադասությունը կարող է արտասանվել նշված



գծ 5

երեք հնչերանգներով։ Այս հնչերանգային երեք կառույցներն ունեն միևնույն հաղորդակցական գործառույթը։ Բ—1-ի ՀՏՀ-ի շարժման ուղղությունը բարձրացող-իջնող-բարձրացող-իջնող է, մյուս երկուսինը՝ բարձրացող-իջնող. նախամիջուկում բ—1-ի և բ—3-ի տոնի շարժումը բարձրացող է, իսկ բ—2-ինը՝ ուղիղ կամ իջնող։ Տոնի շարժումը միջուկում երեք դեպքում էլ բարձրացող է. բ—1-ի ետմիջուկում՝ իջնող է, իսկ բ—3-ի ետմիջուկում՝ ուղիղ (բ—2-ը ետմիջուկ չունի՝ խոսքը առաջին հնչաշարույթում տոնի շարժման մասին է)։ Երկրորդ հնչաշարույթում բոլոր երեք դեպքերում էլ տոնի շարժումը իջնող է (գծ. 5)։ Բ—1-ը ներկայացված է անընդհատ կորով, բ—2-ը՝ կետ-գիծ կորով, բ—3-ը՝ երկու կետ-գիծ կորով (որպես օրինակ վերցվել է «Կինո՞ գնամ, թե թատրոն» հնչադասությունը)։

Երբ բ—1, բ—2, բ—3 հնչերանգային կառույցների ձայնաբանական հատկությունները զուգադրում ենք միմյանց. պարզվում է, որ սրանցում նույնպես կան հիմնական ձայնաբանական հատկություններ, որոնք մեկ տեսակի հնչերանգը տարբերակում են մյուսից։ Այսպես՝ բ—1-ի ՀՏՀ-ի շարժման ուղղությունը բարձրացող-իջնող-բարձրացող-իջնող է, իսկ բ—2-ինը՝ բարձրացող-իջնող. բ—1-ի առաջին հնչաշարույթի առավելագույն հաճախականությունը տեղայնանում է կենտրոնում, իսկ նվազագույնը՝ վերջին վանկում, բ—2-ի առավելագույնը վերջին, իսկ նվազագույնը՝ առաջին վանկում. բ—1-ի առաջին հնչաշարույթի հաճախականության դիապազոնը (13,2 կտ) մեծ է բ—2-ինից (9,2 կտ). բ—1-ի երկու հնչաշարույթների միացման հաճախա-

կանության միջակայքը (+9,2 կտ) մեծ է բ—2-ինից (—4,8 կտ). բ—1-ի առաջին հնչաշարույթի վերջին վանկի ինտենսիվությունը (—10,2 դբ) փոքր է բ—2-ինից (—5 դբ)։

Բ—2-ի և բ—3-ի հատկությունների զուգադրությունից հետևում է, որ Երկուսի մոտ էլ ՀՏՀ-ի շարժման ուղղությունը բարձրացող-իջնող է՝ միայն բ—2-ի տոնի բարձրացումը սկսվում է առաջին հնչաշարույթի հենց սկզբից,



գծ. 6

իսկ բ—3-ինը՝ վերջին վանկից. բ—2-ի առաջին հնչաշարույթի առավելագույն հաճախականությունը տեղայնանում է վերջին վանկում, իսկ բ—3-ինը՝ կենտրոնում և վերջին վանկում. բ—2-ի առաջին հնչաշարույթի հաճախականության դիապազոնը (9,2 կտ) մեծ է բ—3-ինից (5,2 կտ). բ—2-ի առաջին հնչաշարույթի միջուկի հաճախականության աճման դիապազոնը (7,2 կտ) դարձյալ մեծ է բ—3-ինից (2,6 կտ). բ—2-ի առաջին հնչաշարույթի միջուկի հաճախականության աճման արագությունը (0,68 հց/մվրկ) մեծ է բ—3-ինից (0,22 հց/մվրկ). բ—2-ի երկու հնչաշարույթների միացման հաճախականության միջակայքը (—4,8 կտ) փոքր է բ—3-ինից (—2 կտ)։

Ինչպես ցույց են տալիս լսողական և ձայնաբանական վերլուծությունների տվյալները, բ—3-ի հնչերանգը նման է հաստատման հնչերանգին։ Այստեղ հնչերանգը ստորադասվում է շարահյուսությանը, որովհետև հարցման իմաստն արտահայտվում է միայն շարահյուսությամբ, այսինքն՝ հարցական հակադրությամբ (որն իրագործվում է հակադրական թե շաղկապի միջոցով)։

բ) Երկեզր ընտրանքային հարցման ՀՏՀ-ի շարժման ուղղությունը միայն բարձրացող-իջնող է (գծ. 6, որպես օրինակ վերցվել է «Մնա՞մ, թե գնամ» հնչադասության ընդհանուր կորը)։ Առաջին հնչաշարույթի նախամիջուկում տոնի շարժումը հիմնականում բարձրացող է, իսկ երբեմն էլ ուղիղ։ Միջու-

կում բարձրացող է (ետմիջուկ չունի)։ Երկրորդ հնչաշարույթում տոնի շարժումը միայն իջնող է։

Այս հարցման առավելագույն հաճախականությունը տեղայնանում է առաջին հնչաշարույթի վերջին վանկում. առաջին հնչաշարույթի հաճախականության դիապազոնը 8,58 կտ է, միջուկի հաճախականության աճման դիապազոնը՝ 6,92 կտ։ Միջուկի հաճախականության աճման արագությունը



գծ. 7

0,56 հց/մվրկ է, 2-րդ հնչաշարույթի հաճախականության դիապազոնը 10,75 կտ է։ Երկու հնչաշարույթների միացման հաճախականության միջակայքը—3,58 կտ է։

Առաջին հնչաշարույթի առավելագույն ինտենսիվությունը 37,58 դբ է, ինտենսիվության դիապազոնը՝ 4,83 դբ, իսկ վերջին վանկի ինտենսիվությունը՝ 0։ Երկրորդ հնչաշարույթի առավելագույն ինտենսիվությունը 34,75 դբ է, իսկ ինտենսիվության դիապազոնը՝ 5,08 դբ։

Առաջին հնչաշարույթի վանկի միջին տևողությունը 70,83 մվրկ է, իսկ ՄՎՏ հարաբերությունը ՎՄՏ՝ 1,33։ Երկրորդ հնչաշարույթի վանկի միջին տևողությունը 62,83 մվրկ է, իսկ ՄՎՏ հարաբերությունը ՎՄՏ՝ 0,94։

Բազմեզր և երկեզր ընտրանքային հարցումների դեպքում երկու հնչաշարույթների միջև դադար կարող է և՛ լինել, և՛ չլինել։ Այս դադարներն իրենց հետ իմաստային ոչ մի նորություն չեն բերում և ունեն սուբյեկտիվ-զգացական նշանակություն։

3. Լրացուցիչ հարցման ինչերանգ—Լրացուցիչ հարցումը հաջորդում է և՛ հարցմանը, և՛ հաստատմանը։ Առաջին դեպքում լրացուցիչ հարցումից օգտվում է խոսողը (Գիրք գնե՞լ ես։—Այո։— Իսկ քանո՞ն)։ Երկրորդ դեպքում լրացուցիչ հարցումից օգտվում է խոսակիցը (Այսօր Լևոնին տեսա։— Իսկ Սուրենի՞ն)։ Լրացուցիչ հարցման միջոցով խոսողը ձգտում է ստանալ լրացուցիչ, օժանդակ տեղեկություն։ Այս հարցման բովանդակությունը կախված է նախորդող կոնտեքստից։

Լրացուցիչ հարցման ՀՏՀ-ի շարժման ուղղությունը միայն բարձրացող է (գծ. 7, որպես օրինակ վերցրել ենք «Իսկ Սուրենի՞ն» հնչադասության ընդհանուր կորը)։ Միջուկում տոնը միայն բարձրացող է (ետմիջուկ չունի)։ Առավելագույն հաճախականությունը տեղայնանում է վերջին վանկում, իսկ նվազագույնը՝ նախավերջին՝ թեև երբեմն կարող է տեղայնանալ նաև առաջին վանկում։ Հաճախականության դիապազոնը հավասար է միջինը 7,25 կտ-ի,

միջուկի հաճախականության աճման դիապազոնը՝ 5,92 կտ-ի, իսկ միջուկի հաճախականության աճման արագությունը 0,47 հց/մվրկ է։

Առավելագույն ինտենսիվությունը 37,42 դբ է, ինտենսիվության դիապազոնը՝ 9,42 դբ, իսկ վերջին վանկի ինտենսիվությունը՝ —2,58 դբ։

Վանկի միջին տևողությունը 67 մվրկ է, իսկ ՄՎՏ հարաբերությունը ՎՄՏ՝ 1,17։ Լրացուցիչ հարցման հնչերանգը նման է չ—1-ի հնչերանգին, սա-



գ.Ֆ. 8

կայն որոշ ձայնաբանական հատկություններով տարբերվում է։ Այսպես՝ լրացուցիչ հարցման նվազագույն հաճախականությունը տեղայնանում է նախավերջին վանկում, իսկ չ—1-ինը՝ առաջին վանկում։ Լրացուցիչ հարցման ՄՎՏ հարաբերությունը ՎՄՏ 1,17 է, իսկ չ—1-ինը՝ 1,66։ Ինչպես տեսնում ենք, լրացուցիչ հարցման միջուկի տևողությունը զգալիորեն փոքր է չ—1-ի միջուկի տևողությունից, որը և էական տարբերություն է առաջացնում այս երկու տեսակների հնչերանգների միջև։ Լրացուցիչ հարցման դեպքում կարևոր ձեվական ցուցիչ է իսկ շաղկապը, որը միշտ անշեշտ է. այս պատճառով էլ հընչադասության սկզբնական հատվածում ինտենսիվությունը զգալիորեն փոքր է, իսկ ՀՏՀ-ն փոփոխության չի ենթարկվում։

4. Կցորդային հարցման հնչերանգ— Կցորդային հարցման միջոցով խոսողն ուզում է իմանալ խոսակցի կարծիքն այն երևույթի, գործողության կամ իրողության մասին, որը նշված է հարցական նախադասության մեջ։ Սովորաբար խոսողը ցանկանում է, որպեսզի խոսակիցը հաստատի իր ասածը, համաձայնվի իր առաջարկության հետ (Գեղեցիկ աղջիկ է, չէ՞։ Սիրում ես նրան, չէ՞)։

Կցորդային հարցման ՀՏՀ-ի շարժման ուղղությունը բարձրացող-իջնող-բարձրացող է, երբեմն կարող է լինել նաև իջնող-բարձրացող (գծ. 8), որպես օրինակ վերցվել է «Արան է պատմել, չէ՞» հնչադասության ընդհանուր կորը։

Առաջին հնչաշարույթի տոնի շարժումը հիմնականում բարձրացող-իջնող է (երբեմն միայն իջնող), իսկ երկրորդինը՝ միայն բարձրացող։ Առաջին հընչաշարույթի նախամիջուկում տոնի շարժումը մեծ մասամբ բարձրացող է (երբեմն նաև իջնող), իսկ եռամիջուկում՝ միշտ իջնող։ Կցորդային հարցման առաջին հնչաշարույթի անդամներից մեկը հնչերանգի միջոցով միշտ ընդ-

գծվում է։ Դա այն անդամն է, որի վրա խոսողը կամենում է հրավիրել խոսակցի ուշադրությունը։ Ընդգծվող անդամը սովորաբար գտնվում է առաջին հնչաշարույթի սկզբում։

Ողջ հնչադասության առավելագույն հաճախականությունը տեղայնանում է վերջին վանկում, իսկ նվազագույնը՝ առաջին հնչաշարույթի վերջին վանկում (հաճախ էլ ետմիջուկային վանկին հաջորդող վանկում), հնչադասության հաճախականության դիապազոնը (11,29 կտ) մեծ է առաջին հնչաշարույթի հաճախականության դիապազոնից (7,94 կտ)։ Երկրորդ հնչաշարույթի միջուկի հաճախականության և հնչաշարույթի հաճախականության դիապազոնները համընկնում են (5,35 կտ), որովհետև այս հնչաշարույթը կազմված է միայն մեկ վանկից։

Կցորդային հարցման հնչերանգի ձևավորման գործում կարևոր դեր են կատարում երկու հնչաշարույթների միացման հաճախականության միջակայքը (+6,06 կտ) և երկրորդ հնչաշարույթի միջուկի տևողությունը, որի մասին գաղափար է տալիս ՄՎՏ հարաբերությունը ՎՄՏ (1,95)։ Առաջին հնչաշարույթի ՄՎՏ հարաբերությունը ՎՄՏ 0,86 է։ Ինչպես տեսնում ենք, երկրորդ հնչաշարույթի միջուկի տևողությունը շատ ավելի մեծ է առաջին հնչաշարույթի միջուկի տևողությունից։ Պետք է նշել, որ այս հարցման երկրորդ հնչաշարույթի միջուկի տևողությունը բոլոր հարցումների միջուկների տևողություններից մեծ է, որը սրա յուրահատկություններից մեկն է։

Կցորդային հարցման առաջին հնչաշարույթի հաստատում թե հարցում լինելը որոշելու համար՝ «Արան է պատմել, չէ՞» հնչադասության առաջին հնչաշարույթի ձայնաբանական հատկությունները զուգադրվել են միևնույն շարահյուսական կառուցվածքն ունեցող «Արան է պատմել» հաստատման և «Արա՞ն է պատմել» հարցման ձայնաբանական հատկությունների հետ։ Զուգադրությունը ցույց է տալիս, որ այն հաստատական նախադասություն է։ Լսողական վերլուծության տվյալները նույնպես հաստատում են այդ փաստը։ Անհամապատասխանություն նկատվում է միայն ինտենսիվության դիապազոնի և վերջին վանկի ինտենսիվության միջև, որը բացատրվում է երկրորդ հնչաշարույթի առկայությամբ (որի պատճառով կցորդային հարցման առաջին հնչաշարույթի վերջին վանկի ինտենսիվությունը չի նվազում այնքան, որքան այն նվազում է հաստատման դեպքում)։ Ինտենսիվության այս հատկությունների տարբերությունն այնքան էլ կարևոր դեր չի կատարում, որովհետև հնչերանգի ձևավորման գործում հիմնական պարամետրը ՀՏՀ-ն է։ Կցորդային հարցման երկրորդ հնչաշարույթը հարցում է. միայն այստեղ որոշակի դեր են կատարում նաև միջուկի տևողությունը և երկու հնչաշարույթների միացման հաճախականության միջակայքը։

Այսպիսով, կատարված ուսումնասիրություններից հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Հարցման հնչերանգի (և ընդհանրապես հնչերանգի) ձևավորման գործում վերհատույթային հատկություններից կարևորագույն դերը պատկանում է հիմնական տոնի հաճախականությանը։

2. Հարցման շեշտակիր վանկում (միջուկում) հիմնական տոնը կտրուկ աճում է, իսկ ետշեշտում՝ կտրուկ նվազում։ Սա հարցման հնչերանգի ամենակարևոր առանձնահատկություններից մեկն է։

3. Հարցման միջուկը հանդես է գալիս ինչպես հնչերանգային, այնպես էլ հաղորդակցական կենտրոն։ Այն հարցման առանցքակետն է, որովհետև հարցումն իր հիմնական հնչերանգային դրսևորումը ստանում է այս հատվածում։

4. Հարցման և հաստատման հնչերանգների տարբերությունը հիմնականում կապված է միջուկային տարբեր տոնային կառուցվածքների հետ։ Հարցման դեպքում տոնը միայն բարձրացող է, իսկ հաստատման դեպքում՝ բարձրացող-իջնող (հաստատման հնչերանգի միջուկի տոնը հաճախ կարող է լինել ուղիղ, բարձրացող կամ էլ իջնող, սակայն հարցման համեմատությամբ, այս բարձրացումը և իջեցումը շատ փոքր են)։

5. Ժամանակակից գրական հայերենի առանց հարցական բառի հարցման հիմնական տոնի հաճախականության շարժման ուղղությունը կրում է հինգ կարգի փոփոխություն. ա) այն միայն բարձրացող է (չ—1 և լրացուցիչ հարցումներ), բ) բարձրացող-իջնող է (չ—2, չ—3, ենթադրական այո-ոչ հարցումներ, բ—2, բ—3 և երկեզր ընտրանքային հարցում), գ) իջնող-բարձրացող է (կցորդային հարցում), դ) բարձրացող-իջնող-բարձրացող է (կցորդային հարցում) և ե) բարձրացող-իջնող-բարձրացող-իջնող է (բ—1 ընտրանքային հարցում)։

6. Հարցման առավելագույն ինտենսիվությունը տեղայնանում է հնչադասության առաջին բառի նախաշեշտ վանկում, երբ այդ վանկի ձայնավորը հզորությամբ մեծ է շեշտված վանկի ձայնավորից կամ հավասար է նրան։ Այն տեղայնանում է շեշտակիր վանկում, երբ շեշտված վանկի ձայնավորը հզորությամբ մեծ է նախորդող վանկերի ձայնավորներից։ Սա նկատվող ընդհանուր օրինաչափություն է, որը կարող է խախտվել հատկապես այն դեպքում, երբ միջուկը գտնվում է հնչադասության վերջին կամ նախավերջին վանկում։

7. Հնչերանգը ժամանակակից գրական հայերենում կատարում է շարահյուսական գործառություն, որովհետև միևնույն շարահյուսական կառուցվածքն ունեցող հաստատական և հարցական նախադասությունները միմյանցից ձևականորեն տարբերվում են միայն հնչերանգով։ Այս դեպքում որպես իմաստատարբերակիչ ձայնաբանական հատկություններ հանդես են գալիս. ա) հիմնական տոնի հաճախականության շարժման ուղղությունը, բ) նվազագույն հաճախականության տեղայնացումը, գ) հաճախականության դիապազոնը, դ) միջուկի հաճախականության աճման դիապազոնը, ե) միջուկի հաճախականության աճման արագությունը։

8. Չեզոք այո-ոչ հարցումն ունի հնչերանգային երեք կառույց, որոնք կատարում են միևնույն հաղորդակցական գործառությունը։ Այդ կառույցներն ունեն իրենց հիմնական ձայնաբանական հատկությունները, որոնցով նրանք տարբերվում են միմյանցից։

9. Հնչերանգային երեք կառույց ունի նաև բազմեզր ընտրանքային հարցումը, որոնք նույնպես միմյանցից տարբերվում են հիմնական ձայնաբանական հատկություններով։ Ի տարբերություն չեզոք հարցման, միևնույն բազմեզր ընտրանքային հարցումը կարող է հանդես դալ հնչերանգային այս երեք կառույցներով։

10. Ընտրանքային հարցումը հանդես է գալիս նաև առանց հարցական հնչերանգի, այսինքն՝ հաստատման հնչերանգով։ Այս դեպքում հարցման

իմաստն արտահայտվում է միայն հարցական հակադրությամբ, որն իրագործվում է հակադրական թե շաղկապի միջոցով։ Այստեղ հնչերանգը իր նշանակությամբ ստորադասվում է շարահյուսությանը, որովհետև հարցումն իր դրսևորումը ստանում է միայն շարահյուսական միջոցներով։

11. Կցորդային հարցման առաջին հնչաշարությը պարունակում է հաստատում, իսկ երկրորդը՝ հարցում։

12. Ժամանակակից հայերենի առանց հարցական բառի հարցման մեջ կարևոր գործառություն է կատարում օժանդակ բայը։ Այն հարցման շարադասության առանցքն է, որ կարգավորում է հարցման շարադասությունը և գրվում է հաղորդակցական կենտրոնից անմիջապես հետո։ Փաստորեն օժանդակ բայը դրվում է միջուկից հետո և հուշում է, թե հնչադասության ո՞ր բառի վրա է դրվում հարցաշեշտը։ Որպես կանոն հարցաշեշտը դրվում է օժանդակ բային նախորդող վանկի վրա, բայց հաճախ (հատկապես ժողովրդա-խոսակցական լեզվում) այն կարող է դրվել նաև օժանդակ բայի վրա, որոշ դեպքերում էլ (դարձյալ ժողովրդա-խոսակցական լեզվում)՝ օժանդակ բային հաջորդող բառի վրա։ Այս դեպքում, իհարկե, խոսակիցը հարցումն ընկալում է այնպես, ինչպես հարկն է, սակայն այսպիսի արտասանությունը աննպատակահարմար է. ճիշտ է, երբ այդ բառը դրվում է օժանդակ բայից անմիջապես առաջ։

ИНТОНАЦИЯ ВОПРОСА БЕЗ ВОПРОСИТЕЛЬНОГО СЛОВА В СОВРЕМЕННОМ ЛИТЕРАТУРНОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

С. В. ГУКАСЯН

Резюме

Экспериментально-фонетическое исследование интонации вопросительных предложений (без вопросительного слова) современного литературного армянского языка проводится впервые. В качестве экспериментального материала были выбраны следующие подтипы данного вопроса: 1) вопрос, требующий ответа да-нет, 2) альтернативный вопрос, 3) добавочный вопрос, 4) дизьюнктный вопрос. Под вопросом, требующим ответа да-нет, изучена интонация нейтрального и предположительного, а под альтернативным вопросом — двухполюсного и многополюсного подтипов.